Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
12.04.2017թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **9.821**
որից՝

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	24	0.24
դիմում	7246	73.7
բողոք	1523	15.5
կրկնակի	1000	10.1
կոլեկտիվ	28	0.28

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **2.325**

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1186	51.1
բողոք	1139	48.9

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	101	1.02
կոմունալ-կենցաղային	16	0.16
շինարարական	3	0.03
առձեռն (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.05
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	272	2.76
առողջապահության	1127	11.4
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1264	12.8
օրենսդրական	28	0.2
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	553	5.6
ապարատային	153	1.5
այլ հարցեր	6293	64.1
սեփականաշնորհում	6	0.06

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 9.821 նամակներից մոտ 0.24%-ը եղել են առաջարկություններ, 12.8% հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 15.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ՝ դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 73.7%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 5.6%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.02%-ը առնչվում է բնակարանային, 0.16%-ը կոմունալ-կենցաղային, 11.4%-ը առողջապահության, իսկ մնացած՝ մոտ 64.1% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնում ենք, որ ստացված դիմումներից 9496-ին տրվել է գրավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 325-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: